

րում : Նրանք ազդեցութիւն կ'ունենան այդ գործերի վրայ համաձայն իրենց քանակի եւ որակի :

Չորրորդ՝ Վրաստանի դանազան մասերում ցրուած հայերը ազգային միութիւն կը կազմեն ազգային-մշակոյթային ինքնավարութեան իրաւունքներով : Ի պահանջել հարկին այդ միութեանը կարող են յարիլ Վրաստանի սահմաններում ապրող բոլոր վիրահայերը ընդհանուր ղեկավարութեամբ եւ ընդհանուր տնտեսութեամբ իրենց ազգային մշակոյթային կարիքները հոգալու համար :

Հինգերորդ՝ հողային ինքնավարութեան եւ ազգային մշակոյթային ինքնավարութեան համար, վարկեր կը յատկացուեն Վրաստանի պետական եւ տեղական բիւջէներից՝ համեմատական հաւասարութեան սկզբունքով :

Վեցերորդ՝ Վրաստանի հայ քաղաքացիները ընդհանուր պետական գործերում կը վայելեն նոյն իրաւունքները եւ կը կրեն նոյն պարտականութիւնները, ինչ որ վայելում եւ կրում են վիրազդի քաղաքացիները :

Ահա սն կը լինի վիրահայ ազգային փոքրամասնութեան հարցի արդար եւ արմատական լուծումը : Եւ այս լուծումը համապատասխանում է ոչ միայն Ժորճանիայի արտայայտած մտքերին, այլ եւ ժամանակակից Ժողովրդավարութեան եւ մանաւանդ ընկերավարութեան հրամայական պահանջներին :

Սակայն, կը համաձայնի՞ Ժորճանիան այս գործնական լուծմանը : Կը համաձայնի՞ նա այս ձեւով ստեղծելու մէկն այն նախադրուեալներից, որոնք անհրաժեշտ են, որպէսզի «վրացիների եւ հայերի միջեւ, Վրաստանի եւ Հայաստանի հանրապետութիւնների միջեւ առյաւէտ հաստատուեն իրաւական եւ խաղաղ յարաբերութիւններ» :

Դժբախտարար չենք կարող այս հարցերին վճռականօրէն դրական պատասխան տալ : Ձենք կարող այն պատճառով, որ Ժորճանիան, ազգային փոքրամասնութիւնների հարցի լուծման համար այսքա՞ն զեղեցիկ տեսակէտներ եւ սկզբունքներ առաջադրելու ժամանակն իսկ բարոյական ոյժ է դրում իր մէջ պաշտպանելու այն ընդվզեցուցիչ քաղաքականութիւնը, որ նա, իր իշխանութեան օրերին, վարում էր

հանդէպ վիրահայ ազգային փոքրամասնութեան . . .

* * *

Մենք հանդամանօրէն վերլուծեցինք հայ-վրացական կնճռի գլխաւոր հանգոյցները՝ ցոյց տալով թէ սրանից ամէն մէկը ի՞նչպէս սկսուեց, ի՞նչպէս զարգացաւ եւ ի՞նչ վիճակի մէջ է գտնուում ներկայիս :

Ինչպէս սոյն ուսումնասիրութեան նախարանի մէջ էլ ասել ենք, մենք ուրախութեամբ մոռացութեան կը տալինք այս հանգոյցների շուրջը տեղի ունեցած անախորժութիւններն ու դառնութիւնները, եթէ նրանք լուծուած, վերացած լինէին մէջտեղից : Բայց ցաւն այն է, որ, ինչպէս ընթերցողն ինքն էլ տեսաւ, մեր քննած հարցերն այսօր իսկ բացուած վէրքերի պէս միտում են հայ-վրացական փոխյարաբերութիւնների վրայ, թէեւ բոլշեւիկները կաշուից դուրս են դալիս հակառակը փաստելու համար : Իրականութեան այլանդակուելիւնը կեղծ ու պատիր խօսքերով քօղարկելու բոլշեւիկեան արհեստի արժէքը մենք շատ լաւ գիտենք, եւ ընաւ կարիք չենք զգում հաճոյայից ժպիտներ խաղացնել մեր դէմքին այն ժամանակ, երբ մեր սրտից արիւն է կաթում :

Սիրում ենք յուսալ, որ հայ-վրացական անկեղծ եւ գործօն բարեկամութեանը նախանձախնդիր մեր հարեւանները ըստ արժանոյն կը գնահատեն այս շիտակ կեցուածքը, անգամ եթէ մեր զանազան արտայայտութիւնները անախորժ հնչեն նրանց ականջներին :

Հայ-վրացական վերջին շրջանի կնճիւնների մասին մինչեւ օրս դրուել է այս կամ այն առթիւ, այս կամ այն հրատապ խնդրի կապակցութեամբ : Հրապարակի վրայ չկար մի աշխատութիւն, որի մէջ ամփոփուած լինէր այդ կնճիւնների ամբողջութիւնը : Մենք աշխատեցինք լրացնել այդ պակասը, որպէսզի մեր հարեւանները դիւրութիւն ունենան տեսնելու, թէ որո՞նք են մեր դժգոհութիւնների պատճառները, ի՞նչ պահանջներ ունինք մենք նրանցից եւ ինչպէ՞ս ենք հասկանում այդ պահանջների բաւարարումը : Այսպիսի առաջադրութիւն ունենալով՝ մենք պէտք է խօսէինք բաց սրտով եւ լեզուով, առանց գիււանազիտական